



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)
N5(6) 2009թ. մարտի 21- ապրիլի 20**

12 մայիսի, 2009թ.

<i>1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....</i>	<i>3</i>
1.1 Օրենքներ	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ	4
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ.....	8
<i>2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ.....</i>	<i>10</i>
<i>3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ.....</i>	<i>12</i>
3.1 Կառուցվածք և գործառույթներ	12
3.2 Ծրագրեր և կատարողականություն.....	12
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....	14
3.4 Միջազգային համագործակցություն.....	15
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում	15
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն.....	15
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր.....	16

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ¹

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ.	“Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	19 մարտի, 2009թ., ՀՕ-65-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

1. Օրենքի փոփոխությամբ սահմանվել է, որ օրենքի 6.1-րդ հոդվածում նշված՝ ԱՏԳԱԱ-8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8441, 8452 (բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 250510, 250900, 251820, 2836, 39162010, 76041090, 8419, 8426, 8429, 8430, 8435, 8443, 8478, 8479, 85023100, 870410 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է **300 մլն դրամը**:
2. Օրենքով սահմանվել է նաև, որ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 մլն դրամը գերազանցող 6.1-րդ հոդվածում նշված ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել **երեք տարի ժամկետով**: Այդ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ընտրվելու են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ՀՀ կառավարությունը պետք է սահմանի կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգ: Օրենքի նշված դրույթը գործելու է մինչև **2011թ. հունվարի 1-ը**:
3. Փոփոխությամբ սահմանվել է նաև, որ օրենքի 6.1-րդ հոդվածի առաջին մասում նշված ապրանքները մինչև նույն մասով սահմանված ժամկետների լրանալն օտարվելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու (բացառությամբ վերակազմակերպման դեպքերի) դեպքում վճարումը հետաձգված՝ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները և դրանք սահմանված ժամկետից ուշ վճարելու համար օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված այդ ապրանքների համար ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման օրվանից մինչև գործարքն իրականացնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտը ենթակա են վճարման պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի վճարներ:

Փաստաթուղթ.	“Ավելացված արժեքի հարկի մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	19 մարտի, 2009թ., ՀՕ-69-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությամբ՝ անմիջական արտադրողի կողմից ՀՀ-ում արտադրված ձեռագործ գորգերի (ԱՏԳԱԱ 570110, 570210 ծածկագրեր) իրացումը **ազատվում է ԱԱՀ-ից**:

¹ Դիտարկվել և հիմք են ընդունվել.

- ՀՀ պաշտոնական տեղեկագրեր. թիվ 16(682) 25 մարտի 2009թ.-թիվ 19(685), 15 ապրիլի 2009թ.

- ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի ակտերի տեղեկագրեր, թիվ 13 (331), 1 ապրիլի 2009թ.-թիվ 14(332), 15 ապրիլի, 2009թ.

Փաստաթուղթ.	“Շահութահարկի մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	19 մարտի, 2009 թ., ՀՕ-68-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքը լրացվել է նոր 36.3-րդ հոդվածով, համաձայն որի ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով, ազատվում են **շահութահարկի վճարումից**:

Փաստաթուղթ.	“Եկամտահարկի մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	19 մարտի, 2009 թ., ՀՕ-70-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքը լրացվել է նոր 11.1-րդ հոդվածով, համաձայն որի հարկվող եկամուտը որոշելիս ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուների մոտ համախառն եկամուտը **նվազեցվում է ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի չափով**:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 14-ի 484-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	26 մարտի, 2009թ., 290-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18 (684), 08/04/2009թ.
Ուժի մեջ է.	18 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության որոշման փոփոխությամբ սահմանվում է, որ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնող հաստատագրված վճար վճարողները պետք է ներկայացնեն **տեղեկություններ նաև ամսվա ընթացքում ստացված և իրացված գազի ծավալների մասին**: Դրա հետ կապված փոփոխվել է նաև գործող որոշմամբ սահմանված ձևը:

Որոշմամբ սահմանվել է, որ փոփոխված ձևով առաջին անգամ տեղեկություններ պետք է ներկայացվեն 2009թ. մարտ ամսվա համար: Լրացուցիչ տեղեկացվում է, որ ստացված և իրացված գազի ծավալների մասին տեղեկությունների ներկայացման համար օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ ժամկետ սահմանված է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Փաստաթուղթ.	“Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը, լիցենզիայի ձևը և լիցենզիա ստացած անձանց կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող հաշվետվության և առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու հայտին կից ներկայացվող հայտարարության ձևերը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	5 մարտի, 2009թ., 287-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 17 (683), 01/04/2009թ.
Ուժի մեջ է.	01 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

“Առևտրի և ծառայությունների մասին” ՀՀ օրենքի 3.1-րդ հոդվածին համապատասխան՝ առևտրի իրականացման վայրի կազմակերպման տեսակներից **առևտրի կենտրոնների, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների (նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում) կազմակերպումը ենթակա է լիցենզավորման** “Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ նույն օրենքին և լիցենզավորման կարգին համապատասխան:

Որոշմամբ սահմանվել են հայտատուների կողմից լիցենզավորող մարմին ներկայացվող փաստաթղթերը:

Լիցենզիա ստանալու համար **կազմակերպիչ հանդիսացած հայտատուն** փաստաթղթերին կից լիցենզավորող մարմին է ներկայացնում առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների մասին **հայտարարություն՝ համաձայն N2 ձևի**: Հայտարարությունում չի ներառվում այն վաճառատեղերի մասին տեղեկատվությունը, որոնց համար օրենքով սահմանված կարգով պարտադիր չէ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրումը:

Փաստաթուղթ.	“Առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը լիցենզավորող մարմնի ու հարկային մարմնի միջև տեղեկության փոխանակման կարգը և տեղեկությունները ներկայացնելու ձևերը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	05 մարտի, 2009թ., 254-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 16 (682), 25/03/2009թ.
Ուժի մեջ է.	04 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կանոնակարգվում է առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա ստանալու համար հայտերի, առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հայտարարությունների ու առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպիչների հաշվետվությունների պատճենները լիցենզավորող մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից հարկային մարմին ներկայացնելու, ինչպես նաև հարկային մարմնի կողմից լիցենզավորող մարմին տեղեկանքներ ու տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգը:

Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ստանալու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան **3 աշխատանքային օրվա ընթացքում լիցենզավորող մարմինը հարկային մարմին է ներկայացնում որոշման N2 հավելվածի N1 ձևով տեղեկություններ՝** դրանց կցելով՝ լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտերի պատճենները և հայտերին կից՝ լիցենզավորող մարմին ներկայացված առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ **հայտարարությունների պատճենները**:

Հարկային մարմնում տեղեկությունները մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում՝

- **տեղեկանք** հայտատուի հայտարարությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հարկ վճարողի հաշվառման համարների և ՀԴՄ գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հայտարարությունում տեղ գտած անհամապատասխանության մասին,

- **տեղեկություններ՝** սահմանված կարգով առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու անհրաժեշտության կամ բացակայության մասին:

Մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ՝ լիցենզավորող մարմինը որոշման N2 հավելվածի N2 ձևով հարկային մարմին է ներկայացնում տեղեկություններ՝ դրանց կցելով տվյալ եռամսյակի ընթացքում լիցենզավորող մարմին առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպիչների կողմից ներկայացված՝ առևտրի իրականացման վայրի տրամադրած վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ հաշվետվությունների պատճենները:

Հարկային մարմնում նշված փաստաթղթերը մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում տեղեկանք հաշվետվությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի **հարկ վճարողի հաշվառման համարների և ՀՄՍ գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հաշվետվությունում տեղ գտած անհամապատասխանության մասին:** Անկախ որոշմամբ հաստատված կարգով նախատեսված ժամկետներից՝ հարկային մարմինը լիցենզավորող մարմին է ներկայացնում նաև ընթացիկ տեղեկատվություն օրենքով առևտրի իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող՝ հարկային մարմնի հսկողության շրջանակներում պահանջների խախտման դեպքերի մասին:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	12 մարտի, 2009 թ., 268-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 17 (683), 01/04/2009թ.
Ուժի մեջ է.	29 մարտի 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է օդային ուղևորների ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը:

ՀՀ ավիափոխադրողների կողմից օդային փոխադրումների իրականացման դեպքում պետական տուրքի գանձումը պատվիրակվում է **ՀՀ ավիափոխադրողներին**, որոնք պետական տուրքի գումարները հաշվարկում և ՀՀ պետական բյուջե են փոխանցում, ոչ ուշ, քան փաստացի թռիչքի օրվան հաջորդող **3 բանկային օրվա ընթացքում:** Այն դեպքում, երբ ավիափոխադրումներն իրականացվում են ոչ ՀՀ ավիափոխադրողների կողմից (ոչ կանոնավոր փոխադրումներ) պետական տուրքի գանձումը պատվիրակվում է **օդանավակայան շահագործող կազմակերպություններին**, որոնք պետական տուրքի գումարները հաշվարկում և ՀՀ պետական բյուջե են փոխանցում փաստացի թռիչքի օրվան հաջորդող **10 բանկային օրվա ընթացքում՝ անկախ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններից փոխանցումների ստացումից:**

Սահմանվել են ՀՀ ավիափոխադրողների, ոչ կանոնավոր ավիափոխադրում իրականացնող կազմակերպությունների, ՀՀ ԿԱ ՔԱԳՎ և ՀՀ ԿԱ ՊԵԿ միջև պետական տուրքի գանձման առընչվող տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը և ձևերը, ինչպես նաև պետական տուրքի վճարումից ազատման արտոնություն ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 549-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	2 ապրիլի, 2009 թ., 319-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	25 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 14-ի “Նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ սահմանելու մասին” N 549-Ն որոշումը լրացվեց նոր “դ” կետով, համաձայն որի ՀՀ-ից և դեպի ՀՀ ավտոմոբիլային, երթուղային, օդային կամ ջրային փոխադրամիջոցներով միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների նվազագույն շահութահարկի հաշվարկման համար **հասույթը նվազեցվում է նախորդ ամսվա ընթացքում այդ գործունեության արդյունքում ծառայությունների մատուցմանը համապատասխան օտարերկրյա բեռնափոխադրումներին հաշվեգրված՝ նրանց կողմից մատուցված բեռնափոխադրման ծառայությունների (բացառությամբ դրա հետ անմիջականորեն կապված ծառայությունների (բեռնում, բեռնաթափում, պահպանում և այլն) արժեքի (առանց ԱԱՀ-ի) և նույն ժամանակահատվածում հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների չափով:** Ընդ որում, ամորտիզացիոն մասհանումների գումարը չի կարող գերազանցել հասույթի և օտարերկրյա

բեռնափոխադրողներին հաշվեգրված բեռնափոխադրման ծառայությունների արժեքի տարբերության 50 տոկոսը:

Փաստաթուղթ.	“ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կազմակերպական-իրավական ձևեր չունեցող և չլուծարված իրավաբանական անձանց հետագա կարգավիճակի և ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի N 1190-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	12 փետրվարի, 2009թ. N 252-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 16 (682), 25.03.2009թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը

Համառոտ նկարագիր

Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ պետական ձեռնարկությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է լուծարվեն (այսուհետ՝ իրավաբանական անձ)՝ համաձայն հավելվածի: Որոշման հավելվածում նշված իրավաբանական անձանց լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծվող լուծարման հանձնաժողովներում ընդգրկվելու են ներկայացուցիչներ նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից: Որոշմամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին հանձնարարվել է որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրել **իրավաբանական անձանց՝ ՀՀ պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով ունեցած պարտավորությունների մասին տեղեկատվություն**, ինչպես նաև՝ իրավաբանական անձանց կողմից հարկային մարմիններ ներկայացված վերջին հաշվապահական հաշվեկշիռների պատճենները: ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից տեղեկատվություն չտրամադրվելու կամ պարտավորությունների բացակայության մասին տեղեկատվություն տրամադրվելու դեպքում ներկայացնում է հավաստագիր իրավաբանական անձի՝ ՀՀ պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով պարտավորություններ չունենալու վերաբերյալ, իսկ լիազորված մարմնի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում՝ տեղեկանք իրավաբանական անձի՝ ՀՀ ազգային արխիվ հանձնելու ենթակա փաստաթղթեր չառաջանալու մասին:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 895 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	19 մարտի, 2009թ., 306-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 18 (684), 08/04/2009թ.
Ուժի մեջ է.	18 ափիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշման ը) կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի արդյունքում “Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մաքսային բնագավառին առնչվող 11-րդ բաժնի մեջ են ներառվել մաքսային բնագավառին առնչվող լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր 8 տեսակները՝ այդ թվում նաև մաքսային հսկողության տարածքի կազմակերպումը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակ: **Լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր 8 տեսակների համար սահմանվել է լիցենզավորման բարդ ընթացակարգ:**

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 2039-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	2 ապրիլի, 2009թ., 317-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ափիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Որոշման թիվ 2 հավելվածով հաստատված մաքսային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմում և թիվ 3 հավելվածի 7-րդ կետով հաստատված փոխարինող կազմում ընդգրկված պաշտոնների անվանացանկը համապատասխանեցվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կառուցվածքային փոփոխությունների արդյունքում հաստատված պաշտոնների անվանացանկին:

Փաստաթուղթ.	“ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 1930-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	2 ապրիլի, 2009թ., 321-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	25 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Փոխադրման ամփոփագրի լրացման ավտոմատ համակարգչային համակարգի ներդրման և կիրառության ընդլայնման շնորհիվ կրճատվել է փաստաթղթաշրջանառությունը մեկ մաքսային մարմնից մյուսը ապրանքների տեղափոխման գործընթացում: Սահմանվել է դրույթ, համաձայն որի փոխադրման ամփոփագիրը 3 օրինակի փոխարեն լրացվելու է 2 օրինակից, հանվել է **մեկ մաքսային մարմնից մյուսը փոխադրվող ապրանքների վերաբերյալ մաքսային մարմինների միջև ռադիոհեռագրով տեղեկատվություն փոխանակելու պրակտիկան:**

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ.	“ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի 2006թ. հունիսի 23-ի N1-05/10-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	5 մարտի, 2009թ., 271-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 14 (332), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	25 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ կառավարության և Լինսի հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման երկրորդ հուշագրով նախատեսված հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնությունների կիրառման հրահանգի 6.1-րդ կետով սահմանված արտոնության կիրառման ժամկետը երկարաձգվել է մինչև 2009թ. սեպտեմբերի 30-ը:

Փաստաթուղթ.	“Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի մասին” ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը.	19 մարտի, 2009թ., №1
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 14 (332) 15.04.09թ.
Ուժի մեջ է.	25 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

“Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին” ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար վճարից ազատվում են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ սպառման թափոնների համար:

Պաշտոնական պարզաբանման համաձայն բնապահպանական վճարներից ազատվում են միայն **անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք՝ սպառման թափոնները սահմանված կարգով շրջակա միջավայրում (աղբավայրերում) իրենց կողմից տեղադրելու համար:**

Փաստաթուղթ.	“Մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման կարգը հաստատելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	25 դեկտեմբերի, 2008թ., 2008թ. 201-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 13 (331), 01/04/2009թ.
Ուժի մեջ է.	10 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով կանոնակարգվել են մաքսային միջնորդի և մաքսային փոխադրողի մատուցած ծառայությունների դիմաց սահմանված սակագների վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման հետ կապված հարցերը: Սահմանվել է, որ մաքսային միջնորդը և մաքսային փոխադրողը պետք է վերադաս մաքսային մարմնին **տրամադրեն իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանված սակագները:** Բացի այդ, նրանք իրենց գրասենյակներում և գործունեության իրականացման վայրերում հաճախորդների համար տեսանելի տեղերում պետք է **փակցնեն այդ սակագների վերաբերյալ ընթեռնելի տեղեկատվական թերթիկներ:**

Փաստաթուղթ.	“Անմաքս առևտրի խանութների պահեստի և առևտրի սրահի ապրանքների շարժի հաշվառման կարգը հաստատելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	24 փետրվարի, 2009թ., 192-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 13 (331), 01/04/2009թ.
Ուժի մեջ է.	10 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով կարգավորվել են ՀՀ անմաքս առևտրի խանութների պահեստներում և առևտրի սրահներում մաքսային հսկողության ներքո ապրանքների շարժի հաշվառման հետ կապված հարաբերությունները: Սահմանվել են դրույթներ, համաձայն որոնց՝ անմաքս առևտրի խանութի պահեստից առևտրի սրահ կամ առևտրի սրահից պահեստ ապրանքների շարժի հաշվառումը իրականացվում է համապատասխանաբար էլքի և մուտքի մատյանների միջոցով, անմաքս առևտրի խանութի պահեստից առևտրի սրահ կամ ավիաընկերությունների կողմից ինքնաթիռներում վաճառքի նպատակով ապրանքների տեղափոխումը կատարվում է էլքի փաստաթղթի հիման վրա, իսկ անմաքս առևտրի խանութի առևտրի սրահից կամ ավիաընկերությունից ապրանքների հետ վերադարձը պահեստ կատարվում է մուտքի փաստաթղթի հիման վրա:

Փաստաթուղթ.	“Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների անցկացման կարգը հաստատելու և ՀՀ պետական եկամուտների նախարարության 2000 թվականի դոկտեմբերի 5-ի N 02/1508 հրամանում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	25 դեկտեմբերի, 2008թ., 200-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 13 (331), 01/04/2009թ.
Ուժի մեջ է.	10 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով կարգավորվել են մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների անցկացման հետ կապված հարցերը: Սահմանվել է քննությունների անցկացման նոր

կարգ, համաձայն որի՝ քննություններն անցկացվելու են թեստավորման եղանակով: Սահմանվել է թեստը կազմելու, գնահատելու, թեստավորման արդյունքներն ամփոփելու և բողոքարկելու կարգը: Սահմանվել է նաև դրույթ, որի համաձայն՝ մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների, դրանց հարցաշարի, քննությունների անցկացման օրվա, ժամի և վայրի, ինչպես նաև նախապատրաստական դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տեղադրվի Հայաստանի մաքսային ծառայության պաշտոնական կայք-էջում:

Փաստաթուղթ.	ՀՀ ֆինանսների նախարարության 2009թ. մարտի 30-ի “Խոշոր կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ” պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը.	30 մարտի, 2009թ., 1
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 14 (332), 15/04/2009թ
Ուժի մեջ է.	25 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Պաշտոնապես պարզաբանվել են “Հաշվապահական հաշվառման մասին” ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված դրույթները՝

1. խոշոր կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու վերաբերյալ պահանջները տարածվում են սկսած 2009 թվականի տարեկան, ինչպես նաև դրան հաջորդող տարիների համար կազմված ֆինանսական հաշվետվությունների վրա.

2. 2009 թվականի և դրան հաջորդող յուրաքանչյուր հաշվետու տարվա արդյունքներով խոշոր համարվող կազմակերպությունները պարտավոր են այդ տարիների ֆինանսական հաշվետվությունները հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը:

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ.	“Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	31 մարտի, 2009թ., ՀՕ-59-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Սահմանվել է, որ օրենսգրքի 169.17 հոդվածով սահմանված պատասխանատվությունը “Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն պաշտոնատար անձ չհամարվող, փոխկապակցված անձ չհամարվող և “Եկամտահարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացնող չհամարվող ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվում է 2010 թվականի հունվարի 1-ից:

Փաստաթուղթ.	“Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	18 մարտի, 2009 թ., ՀՕ-55-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18 (684), 08/04/2009թ.
Ուժի մեջ է.	18 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով վերաշարադրվել է օրենսգրքի 165-րդ հոդվածը, համաձայն որի.

ՀՀ-ում ապրանքների իրացման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման փողային գնանշումները, ինչպես նաև այդ գործարքների դիմաց դրամական (փողային) վճարումները ՀՀ դրամով իրականացնելու պահանջը չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման

գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նույն խախտումը թույլ տալու դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:

Արժութային հարաբերությունները կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված այլ պահանջներ չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նույն խախտումը թույլ տալու դեպքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման գումարի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Փաստաթուղթ.	“Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	31 մարտի, 2009թ., ՀՕ-58-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15/04/2009թ.
Ուժի մեջ է.	16 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով հստակեցվել են 20-րդ և 21-րդ հոդվածները, ինչպես նաև սահմանվել է, որ պաշտոնատար անձ չհամարվող, փոխկապակցված անձ չհամարվող և “Եկամտահարկի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացնող չհամարվող ֆիզիկական անձանց նկատմամբ օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածներով սահմանված տուգանքները կիրառվում են 2010 թվականի հունվարի 1-ից:

Փաստաթուղթ.	“Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին” ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	18 մարտի, 2009 թ., ՀՕ-56-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 18 (684), 08/04/2009թ.
Ուժի մեջ է.	18 ապրիլի 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով վերաշարադրվել են 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը, իսկ 7-րդ մասը ուժը կորցրած է ճանաչվել: Նշված փոփոխությամբ Կենտրոնական բանկի լիցենզավորած անձանց կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) առաջին անգամ խախտելու դեպքում ԿԲ-ն տալիս է նախազգուշացում՝ խախտումը վերացնելու կամ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով: Մեկ տարվա ընթացքում կրկին անգամ խախտում թույլ տալու դեպքում ԿԲ-ն մինչև մեկ տարի ժամկետով կասեցնում է գործունեության լիցենզիան կամ նշանակում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով: Մեկ տարվա ընթացքում երրորդ կամ ավելի անգամ խախտում թույլ տալու դեպքում ԿԲ-ն ուժը կորցրած է ճանաչում գործունեության լիցենզիան կամ նշանակում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի չորսհազարապատիկի չափով:

Ընդ որում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) առաջին անգամ խախտելու դեպք է համարվում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ խախտելը: Իսկ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջը (պահանջները) խախտելու համար խախտում կատարած անձինք պատասխանատվության են ենթարկվում մինչև այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելը գործող օրենսդրության համաձայն:

Փաստաթուղթ.	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	19 մարտի, 2009թ., ՀՕ-73-Ն

Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15.04.2009թ.
Ուժի մեջ է.	25 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությունները պայմանավորված են “Խաղաղ նպատակներով ստոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին” ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:

“Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքի փոփոխության համաձայն ռադիոակտիվ թափոնների հետ աշխատանքների կատարման տեսակներից **փոխադրումը** հանվել է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկից և միաժամանակ, հստակեցվել է, որ լիցենզավորման է ենթակա ստոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից **կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց** գործունեությունը:

Փաստաթուղթ.	“Պետական տուրքի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	19 մարտի, 2009թ., ՀՕ-74-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 19 (685), 15.04.2009թ.
Ուժի մեջ է.	25 ապրիլի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքի փոփոխությունները պայմանավորված են “Լիցենզավորման մասին” ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:

Ուժը կորցրած է ճանաչվել “Պետական տուրքի մասին” ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 11.37-րդ կետը, որով սահմանված էր ռադիոակտիվ թափոնների հետ աշխատանքների կատարման՝ փոխադրման համար լիցենզիայի տարեկան պետական տուրքի դրույքաչափը՝ բազային տուրքի 5-ապատիկի չափով:

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Կառուցվածք և գործառույթներ

ՊԵԿ նախագահի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից կազմակերպվել են քննարկումներ վերադաս մարմնի վերակազմակերպված կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների վերանայման, կրկնությունների բացառման նպատակով: Նորովի հաստատված գործառույթները թույլ կտան արդյունավետորեն իրականացնել հաջորդող քայլերը. “բիզնես պրոցեսների” ընթացակարգերի հաստատում, ապա աշխատատեղերի(պաշտոնների) նկարագրերի սահմանում, ապա և, ամենավերջում, կատարողականության գնահատման համապատասխան ցուցանիշների սահմանում:

3.2 Ծրագրեր և կատարողականություն

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում տարեկան և այլ աշխատանքային ծրագրերից բխող միջոցառումների կատարման աշխատանքների իրականացումը, կազմակերպումը կանոնակարգելու նպատակով ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 18.03.09թ. հաստատվել է «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում ընթացիկ աշխատանքային ծրագրերի կատարման ապահովման ընթացակարգի մասին» N 549-Ա հրամանը: Վերջինս տարածվում է հրամանի ուժի մեջ մտնելու պահին չավարտված և հետագայում հաստատվող բոլոր ընթացիկ ծրագրերի վրա:

Հաստատված հրամանի համաձայն՝ ընթացիկ ծրագրերի միջոցառումների կատարման հիմնական պատասխանատուները աշխատանքների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը (հաշվետվությունները) ներկայացնում են եռամսյակային պարբերականությամբ (մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը), եթե ծրագրով նախատեսված միջոցառման տևողությունը ավել է քան 3 ամիսը և մեկ անգամ (մինչև ժամկետի ամսվան հաջորդող ամսվա 15-ը), եթե ծրագրով նախատեսված միջոցառման տևողությունը 1-3 ամիս է: Հրամանով նախատեսվել է նաև համապատասխան տեղեկատվությունը տեղադրել ՊԵԿ տեղեկատվական դարանում: 2009թ. առաջին եռամսյակի հաշվետվությունները ներքին օգտագործման նպատակով արդեն իսկ տեղադրված են ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական դարանում:

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում իրականացվել են աշխատանքներ հետևյալ միջոցառումների կատարման ուղղությամբ.

1. Ելնելով ոլորտային առանձնահատկություններից՝ ստուգումների իրականացման ուղեցույցների մշակում, կիրարկում / ծրագրի 3-րդ միջոցառում²/

Ստուգումների ուղեցույցների ցանկը և մշակման ժամանակացույցը հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 27.02.2009թ. «2009թ. հարկային ստուգումների ուղեցույցների մասին» թիվ 215-Ս հրամանով:

2. Հարկ վճարողների սպասարկման ամբողջական ռազմավարության սահմանում (ծրագրի 37-րդ միջոցառում)

Մ/թ ապրիլի 23-ին հաստատվել և ուժի մեջ է մտել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի «ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 847-Ս հրամանը: Հրամանի ընդունումը պայմանավորված է ՀՀ-ում հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությամբ: Նշվել է, որ հարկ վճարողների սպասարկման ոլորտի զարգացման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը նպաստում է հարկերի կամավոր վճարման (ինքնազնահատման) համակարգի գործողությանը, թույլ է տալիս նվազեցնել հարկային մարմնի կողմից կատարվող հսկողական աշխատանքների ծավալը՝ ի շնորհիվ հարկ վճարողների իրազեկվածության:

Սահմանվել է հարկ վճարողների սպասարկման ռազմավարության առաքելությունը, այն է. **զարգացնել ՀՀ հարկ վճարողների սպասարկման համակարգը՝ ապահովելով հարկ վճարողների սպասարկման ժամանակակից, միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգ:**

3. Կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների մշակում

Մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 25.03.09թ. ընդունվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչությունների գործառույթները հաստատելու և դրանից բխող մի շարք միջոցառումների մասին» N 662-Ս հրամանը: Սահմանվել է, որ հարկային (տարածքային) տեսչությունների 2009-2011թթ. ընթացքում հիմնական նպատակն է.

- ապահովել հարկային կայուն եկամուտներ, շեշտադրումը դնելով հարկերի ինքնահայտարարման ինստիտուտի վրա,
- հասնել իրական հարկային պարտավորությունների բացահայտման արձանագրման աշխատանքների հարցում էական աճի, հիմնվելով ռիսկային չափանիշների միջոցով ստուգումների և համապատասխան վերլուծությունների վրա;

Հաստատված հրամանի հավելվածով սահմանվել է հարկային տեսչության կառուցվածքը, հարկային տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները:

4. Ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում և կիրառում:

Մշակվել և շահագրգիռ մարմինների կարծիքին է ներկայացվել «Ռիսկային չափանիշների հիման վրա հարկ վճարողների ընտրության համակարգի վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը: Նախագիծը ներկայացվել է նաև հասարակական քննարկման, տեղադրված է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի (www.taxservice.am) «նախագծեր» բաժնում: Այն պետք է զուգակցվի նաև համապատասխան օրենքներում փոփոխությունների նախագծերով և ներկայացվի ՀՀ կառավարություն:

5. Առանձին ֆորում ստեղծելու նպատակահարմարության հարցի քննարկում (այդ թվում՝ պրոֆեսիոնալ հանրության հետ), որը բաղկացած է լինելու միջազգային կամ բարձր վարկանիշ ունեցող առուփտորական և հաշվապահական խորհրդատվական ընկերություններից

Կազմակերպվել է քննարկում ՀՀ ԿԱ ՊԵԿ ստորաբաժանումների կողմից, բաշխվել են

² ի նկատի է առնվում ՀՀ կառավարության 07.08.09թ. «ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011թթ. ծրագիրը հաստատելու մասին» թիվ 941-Ն որոշումից բխող միջոցառումները:

իրականացվելիք աշխատանքները, կազմվել է սկզբունքային փաստաթղթի նախնական տարբերակը: Նմանատիպ “Ֆորումը” ընդհանուր առմամբ հանդիսանում է “հարկային միջնորդների” հայեցակարգի մաս և նաև զուգակցվում է հարկ վճարողներին սպասարկման ծառայությունների ռազմավարական փաստաթղթի և հարկային հարցերով մեկնաբանումների նոր հայեցակարգի հետ:

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

2009 թվականի մարտին ՀՀ ֆինանսների և ՀՀ արդարադատության նախարարություններին ներկայացվելուց ու հաշվի առնելով այդ գերատեսչությունների դիտողություններն ու առաջարկությունները, ՀՀ կառավարությունը՝ հետագա ընթացքն ապահովելու համար ներկայացվել է “Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի թիվ 941-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու որոշման նախագիծը”, որով նախատեսվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 187-Ա հրամանով հաստատված ՀՀ **մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թթ. ծրագիրը հաստատել կառավարության որոշումով:**

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 187-Ա հրամանով առաջին եռամսյակի համար նախատեսված էր 13 միջոցառում, որոնցից 10-ը սահմանված ժամկետներում կատարվել են: Ընդ որում այդ 10 միջոցառումներից 6-ը ունեն շարունակական բնույթ, իսկ մնացած 4 միջոցառումները հետևյալն են. “Մաքսային ձևակերպումների մասնագետների որակավորման քննությունների ծրագիրը և դրանց անցկացման կարգը սահմանելու մասին”, “Մաքսային հայտարարագրում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին”, “Անմաքս առևտրի խանութների պահեստի և առևտրի սրահի ապրանքների շարժի հաշվառման և հսկողության կարգը սահմանելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանի նախագծերի մշակում և “Մաքսային վարչարարության ընթացքը բնութագրող ցուցանիշների սահմանում և դրանց պարբերաբար հրապարակում”, որոնք հրապարակվել են հարկային և մաքսային համառոտագրերում:

Չկատարված միջոցառումները 3 են, մասնավորապես “Մաքսային գործի ուսուցման դասընթացների կազմակերպում բուհերի շրջանավարտների համար” միջոցառումը հետաձգվել է, քանի որ դեռևս վերակազմավորման փուլում է գտնվում “Ուսումնական կենտրոն” ՊՈԱԿ-ը: “Մաքսատուն” պարբերականի առաջին համարը հրապարակվել էր դեռևս 2008 թվականին, իսկ 2009թ. առաջին եռամսյակում նախատեսվում էր դրա հրատարակման վերսկսումը, սակայն հրատարակման աշխատանքները հարկային և մաքսային մարմինների համար մեկ ընդհանուր պարբերականի հրատարակման հարցի հետ կապված հետաձգվել են երկրորդ եռամսյակ: “Մաքսային հայտարարագրում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ ճշգրտումների փաստաթղթի ձևը հաստատելու մասին” ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանի նախագիծը ներկայումս տեղափոխվել է 2009 թվականի 2-րդ եռամսյակ՝ մաքսային հայտարարագրի լրացման կարգը մեկ միասնական փաթեթում ներկայացնելու նպատակով:

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների/ հարկային ծառայության մասով/

21.03.2009թ.-ից մինչև 20.04.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել է ընդամենը թվով 4 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 10 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից 21.03.2009թ.-ից մինչև 20.04.2009թ.-ը քննարկվել է ընդամենը թվով 12 բողոք, որից.

- բավարարվել է 1 բողոք,
 - բավարարվել է մասնակի 1 բողոք,
- մերժվել է 10 բողոք:

3.3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /մաքսային ծառայության մասով/

21.03.2009թ.-ից մինչև 20.04.2009թ.-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներքին դիտարկումների և վերահսկողության վարչության մաքսային մարմինների ստորաբաժանումների կողմից իրականացվել է 2 ծառայողական քննություններ, որոնց արդյունքում 2 մաքսային ծառայողներ ազատվել են աշխատանքից, իսկ 1

մաքսային ծառայող ենթարկվել է նկատողության:

3.4 Միջազգային համագործակցություն

Ապրիլ ամսին ՀՀ արտաքին գործերի նախարարություն է ուղարկվել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի Պետության կառավարության միջև մաքսային հարցերում համագործակցության վերաբերյալ” համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը՝ իսրայելական կողմին փոխանցելու նպատակով:

Նույն ամսին ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների համաձայնեցմանն են ներկայացվել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” և “Հայաստանի Հանրապետության կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին” համաձայնագրերի նախագծերը:

ՀՀ ԱԳՆ է ուղարկվել նաև “Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին” համաձայնագրի նախագծի՝ հայկական կողմից լրամշակված տարբերակը՝ էմիրաթական կողմին փոխանցելու նպատակով:

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

2009թ. ապրիլի 20-ին կայացել է ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով հերթական մրցույթը, որին մասնակցու դիմում են ներկայացրել 145 քաղաքացիներ:

Մրցույթի արդունքում համալրվել է հարկային ծառայության 45 թափուր պաշտոն:
Հարկային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հերթական մրցույթները կայանալու են 2009թ. մայիսի 20-ին և 25-ին, որոնց վերաբերյալ հայտարարությունները տպագրվել են “Ազգ” օրաթերթում և տեղադրվել www.taxservice.am ինտերնետային կայքում: Մայիսի 20-ի մրցույթը հայտարարվել է հարկային ծառայության 20 թափուր պաշտոնների, իսկ մայիսի 25-ի մրցույթը՝ 35 թափուր պաշտոնների համալրման նպատակով:

2009թ. ապրիլի 3-ից ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում ընթանում է հարկային ծառայողների ատեստավորման գործընթացը: Մինչև ապրիլի 25-ը ատեստավորմանը մասնակցել են 330 հարկային ծառայողներ, որոնցից 76 հարկային ծառայողներ հարկային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին: Նրանցից 41-ը ազատվել են աշխատանքից, իսկ 35-ը՝ իջեցվել զբաղեցված պաշտոններից:

2009թ. մարտի 20-ին մաքսային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել են 156 քաղաքացի:

Մրցույթի 1-ին փուլը կայացել է 2009թ. ապրիլի 20-ին: Ներկայացած 118 քաղաքացիներից բացասական գնահատական են ստացել 83-ը: Հարցազրույցը տեղի կունենա ապրիլի 28-ին և 30-ին:

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն

3.6.1 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն / հարկային ծառայության մասով/

Համառոտագրի այս ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մասի “Թեժ գծով” ստացվել է 252 բողոք և առաջարկություն: Բողոքների հիմնական մասն առնչվել է առևտրի կազմակերպման վայրերում ՀԴՄ նոր կտրոնների չտրամադրման կամ փոքր գումարով ՀԴՄ կտրոնի տրամադրման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրությանը: Զանգահարողների մեծ մասին հետաքրքրել են հայտարարագրի լրացման և հաշվետվությունների հետ կապված բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները ստանալու համար քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան բաժինների հեռախոսահամարները: Զանգահարողների մեծ մասի հարցումները հիմնականում վերաբերել են ապրիլի 3-ին կայացած վիճակահանությանը, շահած կտրոններին և թվերին, պարզավճարների տրամադրման նոր կարգին ու պայմաններին և դրանց հետ կապված բազմաթիվ այլ հարցերի:

3.6.2 Հետադարձ կապ, մամուլի արձագանքներ և “թեժ գծի” վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Մարտի 20-ից մինչև ապրիլի 20-ը “Թեժ գծով” ստացվել է 300-350 զանգ: Զանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել:

Նշված ժամանակահատվածում արձանագրվել է 12 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, ավտոմեքենաների գնահատմանը, ինչպես նաև արտահանման թույլտվությանն առնչվող հարցերին: Որոշ բողոքներ էլ առնչվել են արտերկրից ուղարկված ծանրոցների մաքսազերծման հետ կապված խնդիրներին:

Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ էլ հրավիրել են ՊԵԿ մաքսային ծառայության համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2009 թվական		
		Մարտ	Հունվար-Մարտ	Աճի տեմպ %
		1	2	3
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1632	4313	83.0
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	31227.0	80428.5	82.7
2.1	ԱԱՀ	6073.0	16922.2	66.5
2.2	Շահութահարկ	6958.2	15732.1	78.2
2.3	Ակցիզային հարկ	534.0	1190.6	37.0
2.4	Եկամտահարկ	4390.4	11980.6	111.4
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	8749.3	21531.2	96.0
2.6	այլ	4522.1	13071.8	85.4
3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ (հատ)	1590	4966	186.6
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	3827.5	6483.9	74.7 ³

³ Ցածր ինդեքսը պայմանավորված է մասնավորապես նաև ստուգումների կառուցվածքում ՀՂՄ-ների գծով ստուգումների էական աճի հետ

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2008թ.		2009թ.		Աճի տեմպը%	
		հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	52 804	17 473	47 440	16 437	89.8	94.1
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը(մլն դրամ), այդ թվում՝	336 629	125 446	264 140	105 885	78.5	84.4
	արտահանում (մլն դրամ)	71 974	28 056	43 249	17 295	60.1	61.6
	ներմուծում (մլն դրամ)	264 655	97 390	220 891	88 590	83.5	91.0
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների (միավոր) թիվը	9896	3455	8031	3253	81.2	94.2